

Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի

12-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Ամենքի պես ես էլ մանկուց աչքս բացելուն պես տեսել եմ Մասիսը և իր վիթխարի **ստվերն** իմ գլխին: Նա իհարկե մենակ չէր Արագածը կար առջևս ծաղկունքի հյուսկեն գոտիներով: Բայց նա ինձ համար լեռ էր Մասիսը կենդանի ու գերբնական էակ: Հազարավոր տարիներ է սրբազան լեռն անբաժան է իր **գույզից** հառնել են նրանք **Մեծ ու Փոքր Մասիսները** իրար ձեռք բռնած ինչպես հայր ու որդի: Արաքսի աջ ափից սկսած Փոքր Մասիսը սակայն թաքնվում է հոր փառահեղ **քղամիդով** շղարշված թիկունքին ու մենակ է մնում տիեզերքում **նմանը** չունեցող բիրլիական լեռը որ թվում է **այգաբացի** ակնապարար ծեփծեքումով վառվող ակնախտիղ շողերի տակ հենց նոր է պատռել երկրի արգանդը դեպի երկինք սլանալով այստեղ նա **այլևս** լեռ չէ այլ բնության հրաշափառ երևույթ:

Եվ մինչ օտարը ծնրադրում է այս վեհ տեսարանի առաջ, Արարատյան աշխարհի մարդիկ նայում, անցնում են, ինչպես զավակը, **որ** իր մանվածապատ խոկումների մեջ չի տեսնում ծնողի կերպարանքը, թեև նրա հոգու մի կայծն է:

Մեր ցեղն իր լեռան պես երկնասլաց, համառ ու գաղափարապաշտ է, ակադձուն, թանձր, անուրանալի գեղեցկության սիրահար: Մեր խառնվածքը լեռան պես ծանր է, հակասական ու **ծայրահեղ**: Նրա էության խորքերում անձայն մի թախիժ է փոթորկվում, **ինչպես** Մասիսի հողմերը, որ առնածին ու ցասկոտ պոռթկումներ ունեն:

1. Ի՞նչ արժեք ունի քեզ համար՝ որպես հայի, բիրլիական սրբազնագույն հսկան: Ծարադրի՛ր 1-2 նախադասությամբ: (1 միավոր)
2. Կետադրի՛ր բնագրի առաջին պարբերությունը: (2 միավոր)
3. Գրի՛ր **հյուսկեն, քղամիդ, ակնապարար, ծեփծեքում, մանվածապատ, ակնախտիղ, խոկում, ակադձուն, անուրանալի, առնածին** բառերի՝ տեքստում գործածված իմաստին համապատասխանող մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Գրի՛ր թավ գրված բառերի խոսքիմասային արժեքները, շարահյուսական պաշտոնները: (2 միավոր)
5. Կազմի՛ր 4 նախադասություն **խիստ** բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
6. Ընդգծի՛ր-եր վերջավորությամբ հոգնակի կազմող բառերը. **ծնկոսկր, խաչագող, տողադարձ, վիրակապ, վաչկատուն, բևեկն, սեղմագիր, արշալույս, գետակինձ, վերնախավ, ծածկամիտ, հանքահոր, գազամուղ, ոտնաձայն, սիրամարգ, ենթասպա, մորաքույր**:(1 միավոր)
7. Կազմի՛ր 10 ածանցավոր բառ -**ուն** ածանցով (առանց երկրորդ ածանցի) և տրված բառերից ընտրված համապատասխան արմատներով. **մշտամնա, ոգելից, հանդիպակաց, ցողապատ, ոստայն, շուրջառ, նրբազգաց, հանածո, ցնձագին, զարթուցիչ, մական, երկրաշարժ, սողանք, եռակցել, կանգառ**: (2 միավոր)
8. Առանձնացրո՛ւ սխալ գրված բառաձևերը. նշի՛ր ճիշտը. **հագնել գլխարկը, ի զարմանս, երիցս անգամ, հուրախություն, հարցը կայանում է նրանում, որ.., մեր մոտից մի՛ք խոսի, սաստարել ձեռնարկումները, վերցրեցի, քծնվել, սննկանալ, պարտադիր չէ ի հաստատում, օրեկան, ըստ արժանվույն, սրբության սրբոց, ներողություն**: (2 միավոր)
9. Բացատրի՛ր **Սողոմոնի ծիրանին հագնել, ձայն բազմաց ձայն Աստծոյ, կրավորական կեցվածք ընդունել, ժամանակն իր շավղից դուրս է եկել** թևավոր խոսքերը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Ուղերձ խելակորույս աշխարհին» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)